ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առողջապահության ոլորտ

2025թ.առաջին կիսամյակում մարզում գործում էր 4 բժշկական հաստատություն, որոնցից 1-ը մատուցում է հիվանդանոցային ծառայություններ, 1-ը՝ ամբուլատոր և հիվանդանոցային, իսկ 2-ը՝ պոլիկլինիկաներ են և մատուցում են միայն արտահիվանդանոցային ծառայություններ:

Համաձայն ՀՀ Կառավարության որոշման՝ մարզում իրականացված առողջապահական բարեփոխումների արդյունքում, «Վայոց ձորի բժշկական կենտրոն» և «Ջերմուկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել է Առողջապահության նախարարությանը:

Մարզային ենթակայության բուժհաստատություններում աշխատում են 260 մարդ, որից 62 բժիշկ, 123 բուժքույր:

2025 թվականի ընթացքում մարզային ենթակայության բուժհաստատություններում իրականացվել է 106082,5 հազ. դրամի վճարովի ծառայություններ:

Պետական պատվերով բուժման և հետազոտման նպատակով 16 քաղաքացու համար միջնորդագրեր են ուղարկվել առողջապահության նախարարություն, որոնցից 10-ը ստացել են դրական պատասխան պետական պատվերով բուժման համար և 4-ը՝ դեղապահովման:

Առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 20/20 երեխա իրենց խնամակալների հետ: Ապարանի վերականգնողական առողջարանային կենտրոն է ուղեգրվել հաշմանդամություն ունեցող 1 երեխա:

«Եղեգնաձորի պոլիկլինիկայում» գործող ակնաբուժական կենտրոնում իրականացվել է 136 վիրահատություն:

2025թ.–ին իրականացվել են բազմաթիվ առկա, օնլայն վերապատրաստման դասընթացներ ավագ և միջին բուժաշխատողների, նեղ մասնագետների համար և տրվել են ՇՄՋ կրեդիտներ:

Ոլորտի մասնագետները անցել են եռօրյա վերապատրաստման դասընթացներ ԵՊՀ-ում:

Նպատակային ուսուցման համար կատարվել են 5 ուղեգրում ՀՀ ԵՊԲՀ:

Իրականացվել և իրականացվում է կենտրոնացված և մարդասիրական խողովակներով հատկացված դեղորայքի ներմարզային բաշխում՝ կարգավորումներն իրականացվում են **ԱՐՄԵԴ** համակարգով:

Իրականացվել են այցելություններ մարզային ենթակայության բժշկական կազմակերպություններ, ԲՄԿ-ներ մշտադիտարկման, և խնդիրների վերհանման, կարիքի գնահատման նպատակներով:

Լաբորատորիաներում որակի կառավարման համակարգի ներդրման համապատասխանությունը գնահատելու նպատակով ստեղծված աշխատանքնային խմբի հետ իրականացվել է լաբորատոր ծառայության որակի գնահատում՝ 4 բժշկական կազմակերպություններում :

Բժշկական կազմակերպություններում իրականացվել են բաց դռների օրեր:

Իրականացվել են գրիպի դեմ, ԿԿԽ, ԱԿԴՓ-Մ, ՄՊՊ և այլ պատվաստումներ՝ համաձայն պատվաստումային օրացույցի: 2025 թվականին Վայոց ձորի մարզում պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշը կազմում է 98%–99%(նախատոսված 95%-ի փոխարեն):

2025 թվականին իրականացվել է «Առողջ ապրելակերպի» իրազեկման հանրապետական արշավ վայոցձորյան միջոցառում՝ Արենիի համայնքի Ռինդ բնակավայրում:

Կարմիր խաչի միջազգային կազմակերպության կողմից Վայոց ձորի մարզի բժշկական կազմակերպություններում իրականացվել են ֆինանսական ներդրումներ, մասնավորապես՝ բժշկական կազմակերպությունում կառուցվել են արևային կայաններ:

Արտավան բնակավայրում կառուցվել է նոր բուժակ մանկաբարձական կետ:

<u>Սոցիալական ոլորտի հարցերի բնագավառ</u>

Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովություն. 2020 թվականի 44-օրյա պատերազմի, 2022 թվականի սեպտեմբերի 13-ի Ջերմուկի ագրեսիայի, մարտական հերթապահության ժամանակ զոհված, անհայտ կորած, հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ ամենօրյա աշխատանք է տարվել: Օրենքով սահմանված հատուցումները ընտանիքները ստանում են: Այցելել ենք զոհված զինծառայողների 97 ընտանիքների: Աշխատանքներ ենք տարել բարձրացված հարցերի լուծման ուղղությամբ: Օգնության կարիք ունեցող ընտանիքներին ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրվել է ֆինանսական աջակցություն:

ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով շարունակվում է բնակարանի բարելավման կարիքավոր զոհված և հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողների ընտանիքների հաշվառումը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված են 45 ընտանիքներ:

2006թվականին հաշվառված 2 հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներ բնակարանի գնման վկայագրով բնակարան են գնել: Բնակարանի գնման վկայագիր է

ստացել 1 զոհված զինծառայողի ընտանիք : Հաշմանդամություն ունեցող, կարիքավոր նախկին զինծառայողներին ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրվել է դրամական օգնություն:

Ղարաբաղից տեղահանված ընտանիքներ - 2025 դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզում բնակվում տեղահանված 294 ընտանիք և 1054 անձ :

Պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել տեղահանված բնակչության հետ: Ներկայացվել են աջակցության ծրագրերը, բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրում իրականացված բարեփոխումները: Արձանագրվել են բարձրացված հարցերը և աշխատանքներ են տարվել դրանց լուծման ուղղությամբ : «Առաքելություն Հայաստան» և «Սիվիտտա Էմ» բարեգործական հասարակական կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպվել է հանդիպումներ փաստաբանների հետ և փաստաթղթերի հետ խնդիրներ ունեցող անձանց իրավական խորհրդատվություն է տրամադրվել: Թուֆենկյան հիմնադրամի հետ կազամակերպվել է հանդիպում՝ Սվարանց բնակավայրում իրականացվող բնակարանաշինության ծրագրի իրազեկման համար:

ՀՀ կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 150-Լ որոշմամբ Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրում սահմանվել է 4 մլն դրամ սահմանաչափով բնակավայրերի նոր ցանկ՝ Եղեգնաձոր, Վերնաշեն, Գլաձոր, Գետափ Մալիշկա, Արփի, Ագարակաձոր, Աղավնաձոր, Մոզրով, Ջերմուկ Գնդեվազ,Կեչուտ, Շատին: Պատրաստել ենք բնակավայրերի աշխարհագրական դիրքի, սոցիալ-տնտեսական վիճակի, ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկատվություն՝ bnakavayr.am հարթակում տեղադրելու համար:

Տարեցներ և հաշամանդամություն ունեցող անձինք

Հաշմանդամություն ունեցող անձանց ներառման աշխատանքները համակարգում է <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Վայոց ձորի մարզային հանձնաժողովը>>: Հանձնաժողովը համագործակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական, մարզային, համայնքային կառույցների, սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացմանը խոչընդոտող, զգալի ներդրում չպահանջող խնդիրները ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Մեր առաջարկությունը՝ հասարակական, արտադրական նշանակության շենք-շինությունների կայանատեղիներում հաշմանդամություն ունեցող անձանց տեղափոխող մեքենաների համար տեղհատկացում տրամադրելու վերաբերյալ, ընդունվել և պարտադիր պահանջ է դարձել :

Տարեցների հիմնախնդիրները վարչության ուշադրության կենտրոնում եմ՝ հոկտեմբերի 1-ին տարեցների միջազգային օրվա կապակցությամբ, այցելել ենք 5 հարյուրամյա տարեցներին, տրամադրվել է նվերներ և ֆինանսական աջակցություն:

Մայիսի 9-ին այցելել և շնորհավորել ենք Հայրենական Մեծ պատերազմի վետերան, 99 ամյա Խորեն Սերգեյի Հարությունյանին :

Մարզի բնակչության սոցիալական խնդիրները՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված սոցիալական աջակցության նպատակով ծախսերը 2025 թվականի համար կրճատվել է 33%-ով:

Սոցիալական արդարությունը պահպանելու՝ համաչափ և հասցեական օգնություն տրամադրելու համար, շրջաբերականներ է ուղարկվել համայնքապետարաններ: 2025 թվականին դրամական օգնություն է տրամադրվել 565 քաղաքացիների: Կատարել ենք տնային այցելություններ, որոնց արդյունքում վեր են հանվել առավել անապահով քաղաքացիների խնդիրները և ըստ հնարավորության լուծումներ են տրվել: Կազմակերպվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի, մարզպետի տեղակալների հետ քաղաքացիների հետ հանդիպումներ: Աշխատանքներ են տարվել բարձրացված հարցերի լուծման ուղղությամբ :

<u>Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացրած աշխատանքների վերաբերյալ</u>

Իրականացվել է աշխատանք ռազմական գործողություններից տուժած, ընտանեկան տարաձայնություններ ունեցող, բազմազավակ, սոցիալապես անապահով, հաշմանդամություն և այլ խնդիրներ ունեցող ընտանիքների, առանց ծնողական խնամքի մնացած, բռնության ենթարկված, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կրթությունից խուսափող և հակասոցիալական վարք դրսևորող, սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաների և նրանց ընտանիքների հետ:

Կատարվել է համագործակցություն ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Եղեգնաձորի, Վայքի և Ջերմուկի բաժինների հետ՝ կանխարգելիչ քարտային հաշվառման վերցված իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների, բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքների հետ, այցելություններ և մասնագիտական աշխատանք՝ կրկնակի իրավախախտումների կանխարգելման, ընտանիքում հաշտության վերականգնման ուղղությամբ:

Ոլորտի մասնագետները մասնակցել են

- Եղեգնաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ընդլայնված 2 նիստի՝ Արցախից տեղահանված ընտանիքի կրթությունից դուրս մնալու վտանգում հայտնված երեխայի վարքային խնդիրների և հանրակրթություն վերադարձնելու հարցի քննարկմանը,
- Երևանի «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում խնամատարության զարգացմանն ուղղված աշխատաժողովին,

- «Հավասար ԵՄ-ը հանուն կանանց տնտեսական հզորացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակում «ՎԻՆՆԵԹ Գորիս» ՀԿ-ի կազմակերպած մարզային քննարկմանը,
- «Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամատարության վերաբերյալ» վերապատրաստման 2-օրյա դասընթացին Հանքավանում,
- «Սոցիալական պաշտպանության համակարգը Հայաստանում» թեմայով առցանց վերապատրաստմանը,
- Միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) Ջերմուկի և Վայքի տարածքային կենտրոնների համակարգող խորհրդի նիստերին,
- Արենի և Եղեգիս համայնքների իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներին,

Հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետները մասնակցել են Խարբերդի մանկատանը կազմակերպած «Ճախրուկ» ամենամյա միջազգային ներառական փառատոնին:

Կանոնադրական գործառույթների շրջանակում կատարվել է խնամատար ծնողներ հաշվառված 2 անձի և խնամատարության ենթակա երեխաների համադրում, երեխայի ընտրություն: Մարզպետի աշխատակազմում գործող բազմամասնագիտական խումբն իրականացրել է ամենամսյա այցելություններ խնամատար ընտանիք՝ հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողության նպատակով: Կատարվել է որդեգրելու ցանկություն հայտնած երկու քաղաքացու հաշվառում: Համադրման արդյունքում ընտրվել է երեխա «Երևանի մանկան տուն» ՊՈԱԿ-ից: Կատարվել է անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի պատրաստում՝ դատարան դիմելու համար:

Իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած մեկ երեխայի սկզբնական և կենտրոնացված հաշվառում: Վերջինս, որպես ԱԾԽՄ երեխա, ձեռք է բերել սոցիալական երաշխիքներից օգտվելու իրավունք:

Իրականացվել է կրթությունից դուրս մնացած երեխաների հաշվառում, համայնքային սոցիալական աշխատողների աշխատանքների վերահսկում և կանոնակարգում էլեկտրոնային համակարգում, ընդհանուր բազայի հետ աշխատանք:

Կատարվել է այցելություններ մարզի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման գործընթացում առկա խնդիրներին ծանոթանալու նպատակով, հանդիպումներ դպրոցների տնօրինության, մանկավարժների և ծանր ֆունկցիոնալության խանգարում ունեցող երեխաների ընտանիքների հետ:

Կատարվել է համագործակցված աշխատանք ՝

- Համայնքների և հանրակրթական դպրոցների հետ՝ «ՕքսԵԳեն» հիմնադրամի կողմից իրականացվող «Լինել նրա տեղում. Վերջ դնենք կանանց նկատմամբ բռնությանը Հայաստանում» և «Աջակցման կենտրոնները հանուն գենդերազգայուն մոտեցման» ծրագրերի շրջանակում իրականացվող դասընթացների կազմակերպման ուղղությամբ,

- «Բարի մամա» բարեգործական ՀԿ-ի հետ՝ Մարտիրոս և Խաչիկ սահմանամերձ բնակավայրերի խոցելի խմբերի 9-11 տարեկան դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը Սևանա լճի ափին, Շողակաթ գյուղի ճամբարում կազմակերպելու ուղղությամբ,
- Համայնքների և դպրոցների հետ՝ մարզի զոհված, հաշմանդամություն ձեռք բերած կամ հաշմանդամություն ունեցող զինծառայողների, աշխարհազորայինների, ծնողազուրկ ու սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան 120 դպրոցահասակ երեխայի ամառային հանգիստը Կոտայքի մարզի Հանքավանի «Հասմիկ» ճամբարում կազմակերպելու ուղղությամբ,
- ՀՀ ԱՍՀ նախարարության, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի և ՀՕՖ-ի երեխաների աջակցության հիմնադրամի հետ՝ ՏԻՄ-երի ներկայացուցիչների, տարբեր ոլորտի մասնագետների և քաղաքացիների համար խնամատարության կայացմանն ուղղված մասնագիտական հանդիպումների կազմակերպման ուղղությամբ:

Կատարվել է շարունակական աշխատանք «Նորք» տեղեկատվական համակարգի «Մանուկ» ենթահամակարգում: 2025 թվականի ընթացքում համակարգ է մուտքագրվել 74 երեխայի վերաբերյալ տվյալներ: Իրականացվել է համակարգման և մեթոդական աշխատանք Մանկական զարգացման հիմնադրամի Ջերմուկ, Վայք և Արենի համայնքների «Զարման» կենտրոնների մասնագետների հետ:

Տրամադրվել է տեղեկատվություն երեխաների և ընտանիքի հիմնախնդիրներով զբաղվող պետական և հասարակական կառույցներին և շահագրգիռ այլ անձանց, կատարվել է իրավական ակտերի ուսումնասիրություն, քննարկում և առաջարկությունների ներկայացում:

Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի

պարտականությունները կատարող՝ Լ. Կարապետյան

12.01.2026թ.